ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/88

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4832-2021 գրությամբ «Սուպրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 26.03.2021թ. թիվ 01/10-171 գրության հիման վրա, 01.04.2021թ. թիվ 26/26-1/4832-2021 գրությամբ նախաձեռնել է «Սուպրա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սուպրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սուպրա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սուպրա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/88 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.03.2021թ. թիվ 01/10-171 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020թ. կարիքների համար կազմակերպվել է ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սուպրա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Կատարող) միջև 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքվել է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագիր: Պայմանագրի Հավելված 1-ով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, այնուհետև երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ մինչև 2021 թվականի հունվարի 25-ը, սակայն ծառայությունը Ընկերության կողմից պատշաճ չի մատուցվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվում է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/88 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Սուպրա» ՍՊԸ-ի միջև 14.10.2021թ. կնքվել է թիվ «ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89» ծածկագրով նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նյութական արժեքների գնահատման ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ծառայությունը պետք է մատուցվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.:

4. Կողմերի միջև 14.10.2020թ. կնքվել է N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, որի համաձայն «ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

5. Կողմերի միջև 17.12.2020թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 25.01.2021թ.:

6. Պատվիրատուն «Սուպրա» ՍՊԸ-ին ուղղված 23.03.2021թ. թիվ 01/10-160 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սուպրա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքվել է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագիր:

Պայմանագրի Հավելված 1-ով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, այնուհետև երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ մինչև 2021 թվականի հունվարի 25-ը, սակայն ծառայությունը Ընկերության կողմից պատշաճ չի մատուցվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվում է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 23.03.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը

միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4832-2021 գրությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 26.03.2021թ. թիվ 01/10-171 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Սուպրա» ՍՊԸ-ի միջև 14.10.2021թ. կնքվել է թիվ «ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89» ծածկագրով նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նյութական արժեքների գնահատման ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ծառայությունը պետք է մատուցվի ֆինանասական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.:

Կողմերի միջև 14.10.2020թ. կնքվել է N 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, որի համաձայն «ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Կողմերի միջև 17.12.2020թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ մինչև 25.01.2021թ.:

Պատվիրատուն «Սուպրա» ՍՊԸ-ին ուղղված 23.03.2021թ. թիվ 01/10-160 գրությամբ

հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սուպրա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքվել է նյութական արժեքների գնահատման ծառայությունների մատուցման թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագիր:

Պայմանագրի Հավելված 1-ով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, այնուհետև երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ մինչև 2021 թվականի հունվարի 25-ը, սակայն ծառայությունը Ընկերության կողմից պատշաճ չի մատուցվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիրատուն միակողմանի հրաժարվում է 2020 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված թիվ ՈւԱԿ-ԳՀԾՁԲ-20/89 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը»:

<u>Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 23.03.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի

լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) ***<u>խախտվել է ծառայության մատուցման ժամկետը</u>:***

Այսպիսով՝ «Սուպրա» ՍՊԸ-ն խախտել է իր և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 14.10.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Սուպրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.04.2021թ. թիվ 26/26-1/4832-2021 գրությամբ «Սուպրա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սուպրա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**